

# Արմէնրէս Եւ Մելգոնեան Կրթական Նաստատութիւնը

Տայաստանի Կառավարութեան պաշտօնական խօսնակ Արմէնրէս հաղորդագրութեամբ մը վերջերս հրապարակ իջաւ որպէս պաշտպան ՎԲԸՄի որոշման փակելու Մելգոնեան Կրթական Նաստատութիւնը (ՄԿՆ) Կիպրոսի մէջ:

Մեզի ծանօթ չէ թէ որո՞ւ գաղափարն էր այդ, ՎԲԸՄի՞ որ պաշտպան կը փնտռէ իր ապօրինի ծրագրին, կամ Տայաստանի կառավարական կարգ մը անձերու, որոնք կը յուսան ձեռով մը նպաստատրուիլ այս առիթէն:

Բայց աղբիւրը որն ալ ըլլայ, հաղորդագրութեան միակ հետեւանքը այն եղաւ որ ՄԿՆի պաշտպան անձեր եւ կազմակերպութիւնները աւելի եւս համոզուին որ օրինական ամէն քայլ պէտք է առնուի արգելք ըլլալու համար Մելգոնեանի քայլ առ քայլ քայքայման:

Նախ եւ առաջ ըսենք որ բարեբար Կարապետ Մելգոնեան իր կրթական ծրագրի իրագործման համար որեւէ դեր չէ սահմանած Տայաստանի Կառավարութեան: Ընդհակառակը, որոշ գումար մը կտակած է Էջմիածնի, եւ պաշտօն յանձնած է Էջմիածնի Վեհափառին որ եթէ ՎԲԸՄը անկարող դառնայ Մելգոնեանը շարունակելու, Վեհափառը մարմին մը նշանակէ որպէսզի Մելգոնեանը շարունակուի ըստ Կ. Մելգոնեանի ծրագրին:

Մեր կարծիքով, Տայաստանի Կառավարութեան միջամտութիւնը անձարակ փորձ մըն է սփիւռ քահայութեան բարեացակամութիւնը շահելու այս հարցին մէջ: Այո՛, ամէն հայ կ'ուզէ օգնել Տայաստանի ժողովուրդին որպէսզի կեանքի պայմանները աւելի տանելի դառնան հոն, բայց ամէն հարցի մէջ միամտօրէն անսահման վստահութիւն արտայայտելու օրերը շատո՞նց անցած են:

Իրաւացի կամ ոչ, երբ կը փորձենք երեւակայել Մելգոնեանի փոխարէն Տայաստանի մէջ փոքր ձամբարի մը հիմնումը, ամէնքիս աչքին առջեւ կը ցցուի սարսափելի օրինակ մը որ վերջերս տեսանք. կ'ակնարկեմ Տայաստանի երկրաշարժէն վերջ ՎԲԸՄի կողմէ կ'առուցուած եւ հինգ միլիոն տօլար արժած սառնարանին որ վերջերս ծախուեցաւ անձի մը 150,000 տօլարի: Բայց մեզի աւելի անհանգստացնողը այն էր որ որեւէ զանգատ չիմացանք ՎԲԸՄի կողմէ, ինչ որ որոշ անախորժ եզրակացութիւններու կը մղէ սփիւռքահայր: Ուրեմն, կամայ կամ ակամայ, սփիւռքահայր կը տարուի խորհելու որ Մելգոնեանի հսկայ ժառանգն ալ կրնայ ենթարկուիլ սառնարանին ձակատագրին եթէ ՎԲԸՄը արտօնուի իր ապօրինի ծրագիրը իրագործելու:

Բայց ինչպէս վերել ըսինք, Տայաստանի Կառավարութիւնը ՄԿՆի մասին ըսելիք չ'ունի: Արդէն յատկի է որ հարցին ալ ծանօթ չեն, քանի որ Կարապետ Մելգոնեանի կտակին բոլորովին անծանօթ կ'երեւին:

Կարապետ Մելգոնեան կը նախատեսէ մինչեւ 500 ուսանող Մելգոնեանի մէջ, ո՛չ թէ 400 ինչպէս կ'ըսէ հաղորդագրութիւնը: Այս պարագային, թիւը չէ որ կարեւոր է, այլ գրողին անգիտակ ըլլալը:

Նոյնպէս սխալ է թէ վերջերս պակասած է աշակերտութեան թիւը: Վերջի 60 տարուայ ընթացքին աշակերտներու թիւը ընդհանրապէս եղած է 200-էն 220-ի միջեւ, թիւ մը որ որոշած է ՎԲԸՄը: Մտաբերեցէք թէ վերջի 40 տարուայ ընթացքին ե՞րբ եւ քանի՞ անգամ իմացաք որ ՎԲԸՄը աշակերտ կը փնտռէ ՄԿՆի համար... Մենք նոյնիսկ կը զարմանանք թէ 200է աւելի աշակերտ եղած է միշտ, առանց որեւէ լուրջ ճիգի:

Սխալ է նոյնպէս այն գաղափարը թէ Մելգոնեանի շրջանաւարտներ կարող չեն իրենց ուսումը շարունակել իրենց եկած երկիրներուն մէջ. այս ճիշտ է միայն Թուրքիոյ մէջ... Եթէ այսպիսի հարց մը ըլլար, նախ Մելգոնեանի շրջանաւարտներն են որ այդ մասին պիտի զանգատէին: Մինչդեռ, ընդհակառակը, անոնք բացարձակ մեծամասնութեամբ կը գիտակցին ՄԿՆի արժեքին Տայ իրականութեան մէջ, եւ կը պայքարին փրկելու Կարապետ Մելգոնեանի կտակը:

Անհետեւ է նոյնպէս թելադրել որ Մելգոնեանը չի կատարեր իր երբեմնի առաքելութիւնը: Երբ աշխարհացրիւ եւ ամէն տարիքի Մելգոնեանցիներ քով քովի կու գան պահպանելու Մելգոնեանի կտակը, այդ արդէն ամենագորատր փաստն է որ Մելգոնեանի սաներ գիտակից են իրենց առ աքելութեան:

Երբ կ'ըսուի որ ատենօք Մելգոնեան կը կատարէր իր առաքելութիւնը իսկ այսօր ո՛չ, այդ կը նշանակէ որ ժխտականօրէն կը դատենք այսօրուայ սերունդը: Այս գաղափարին ծիծաղելիութիւնը անմիջապէս յայտնի կ'ըլլայ երբ նկատի առնենք որ 1990-ի շրջանաւարտներ այսօր 30-31 տարեկան երիտասարդներ են որոնք հազիւ գործի ասպարէզ մտած եւ նոր ընտանիքներ կազմած

անձեր են: Այս երիտասարդները դատել եւ պնդել որ իրենց առաքելութիւնը չեն կատարեր, անհմատ է եւ կը ցուցնէ միայն գաղափարը արտայայտողին մտային (ան)կարողութիւնը:

Իսկ թէ կա՞ն Մելգոնեանցիներ որոնք կողմնակից են Մելգոնեանի փակման, այո՛, կան ճղճիւ թիւով մի քանիներ, ինչպէս օրինակ Սէսիլ Քէշիշեան, որ վերջերս ստորագրած է յօդուած մը «00000» խորագրով: Մենք կ'ենթադրենք որ այդ յօդուածին դրդապատճառը պարզապէս օգնութեան հասնիլ է իր անձնական բարեկամին, ՆԲԸՄի ներկայ նախագահին, քանի որ ուրիշ պաշտպաններ գրեթէ չկան: Եթէ կը սխալինք մեր ենթադրութեան մէջ եւ Սէսիլ Քէշիշեան իսկապէս համոզուած է իր առաջ քշած սին ու անհմատ պատճառաբանութիւններուն, ուրեմն այդ կարելի է նկատել Մելգոնեանցիի մը ձախողանքը, եւ եթէ գտնուէին իրեն պէս բազմաթիւ Մելգոնեանցիներ, այն ատեն իրաւունք կ'ունենայինք խորհելու թէ Մելգոնեանը ձախողած է իր առաքելութեան մէջ: Թիւով որքան ալ քիչ ըլլան, մենք նոյնիսկ կ'ակնկալենք որ ՆԲԸՄի դրդումով ասպարէզ իջնեն այս մի քանիները եւ փորձեն իրենք զիրենք ներկայացնել որպէս Մելգոնեանցիներու բանբերը:

Մելգոնեանը միջնակարգ վարժարանի վերածելու գաղափարը գործնական չէ, այլ պարզապէս Կիպրահայ գաղութին անձանօթ սփիւռքահայութեան աչքին փոշի փչելու ձախաւեր փորձ մը եւս: Առաւելագոյն 40-50 աշակերտով կարելի չէ երկրորդական վարժարան մը պահել: Կիպրահայ գաղութը, ինչպէս նաեւ Մելգոնեանի նախկին սաներ որոնք ծանօթ են տեղւոյն պայմաններուն, լուրջի չեն առներ այս կարելիութիւնը:

Եզրակացնելու համար մեր խոհերը Կիպրոսի Մելգոնեան Կրթական Նաստատութեան մասին, կ'ուզենք շեշտել կրկին որ Մելգոնեանը կրնայ ունենալ միայն մէկ ապագայ.- շարունակել իր առաքելութիւնը հիմնուած օրինական համաձայնութեան վրայ որ կնքուած էր Կարապետ Մելգոնեանի, ՆԲԸՄի եւ Պուլսոյ Պատրիարքարանին միջեւ, եւ որոն համար Կարապետ Մելգոնեան նուիրած էր վիթխարի գումար մը: Նամաձայնութեան մէջ նոյնիսկ նախատեսուած է ՆԲԸՄի անյետացումը, բայց Մելգոնեան Նաստատութեան յափտեան գործունէութիւնը ապահով գետնի վրայ դրուած է, այնքան ատեն որ այդ յանձնառութեան մէջ մտնող ինստատար մարմինը չ'արտօնուիր սխալ մը գործելով փոշիի վերածել բարերարին հսկայ ժառանգը: